

6358

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ



ԾԱՎԻԿՆ
ՈՒ
ՀԱՏԻԿԸ

891.995
7-26

ՄԵՏՐԱՏ

1937

ՅԵՐԵՎԱՆ

891.990.

7-26


Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

30 MAY 2011

ԾԱՎԻԿՆ ՈՒ ՀԱՏԻԿԸ

Նկարները

Ս. ԱԼԹՈՒՆՅԱՆԻ



6358

ՊԵՏԱԿԱՆ

ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ԾԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՁԵՐԵՎԱՆ 1937

Պատ. խմբագիր՝ Ռ. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գապարյան
Սրբագրիչ՝ Ա. Արզախյան


Գլխավոր լիազոր Կ—4508, Հրատ. 3959

Պատկեր 38, տպագր. 5000

Պետհրատի տպարան, Յերեվան, II Կնուկյանցի, 4



17210-58



Գլուղացիներն սալով ցորեն են տանում: Ճանապարհին
տոպրակները մեկի բերանը քիչ բացվեց և ցորենն սկը-
սեց թափվել:

Ծավիկ ծիտը, վոր նստած էր թփին, նկատեց այն,
վրա թռավ ու սկսեց կրտ-կրտալեն հավաքել:

Ուտում է Ծավիկ ծիտը և ճրտ-ճրտալեն լերզում:

Ծտի բախտը վոր բանի,

Քեռին ցորեն կտանի.

Լիք տոպրակը կբացվի,

Հատիկ-հատիկ կթափվի:

Ցորեն, ցորեն, հատ-հատիկ,

Կեր, կշտացիր, Ծավ ծիտիկ:

Բայց Ծավիկ ծիտը լերզը դեռ չէր վերջացրել, լերբ
դիմացից մի անցվոր լերևաց: Անցվորը տեսավ թե ինչ-
պես թափվում է ցորենը, իմաց տվեց սալապանին:

Սալապանն իջավ սալի գլխից, տոպրակի բերանը
պինդ կապեց և սալը նորից քշեց:

Ծավիկ ծիտը, վոր թռել, նստել եր հեռու քարին, տխուր-տխուր նայում եր անցվորին և մտքում բարկանում վրան:

«Մի հարցնող լինի, թե քո ինչ գործն ե, վոր հայտնում ես սալապանին: Գո ցորենը հո չի... Գեղ ինչ վրնաս ե հասնում, չեթե նրա ցորենը թափվում ե... Ա՛յ ծավի քո ճիտը, հա... ձուտիդ ճիվը կոտորի»...

Անիծում եր Ծավիկ ծիտը:

Յերբ անցվորն ու սալը հեռացան, Ծավիկ ծիտը նորից սկսեց հավաքել մնացած հատիկները:

Ծավիկ ծիտը կշտացել եր: Նրա քուչն ուռել եր, լցվել, բայց դեռ գետնին թափված հատիկներ կալին:

«Տանեմ, պահեմ, վոր հետո, չեբբ սովեմ, զամ ուտեմ» — մտածեց Ծավիկ ծիտը:

Այդպես ել արավ:

Թռավ, մոտիկ բլրի լանջին փոքրիկ փոսեր փորփորեց — կտուցով ու ճանկերով, հետո չեկավ, հատիկները մեկ-մեկ կացելով, տարավ լցրեց փոսիկների մեջ, հողով ծածկեց ու ինքը թռավ դեպի իր բունը, կուշտ-կուշտ պառկեց բնում ու կուշտ-կուշտ քնեց:

Լուսաբացին Ծավիկ ծիտը չեբբ աչքերը բացեց, տեսավ, թե ինչպես սար ու ձոր ծածկվել են ձյունի սավանի տակ, իսկ վերևից ել թափվում են ու թափվում ձերմակ քուլաները:

Ջարմացել եր Ծավիկ ծիտը, աչքերին չեբբ հավատում: Ի՞նչպես պատահեց, վոր այսպես շուտ ձյուն չեկավ ձմեռնացավ. չե՞ վոր դեռ արև եր:

Բայց Ծավիկ ծիտի տոտիկները մրսում ելին, նման բաների մասին մտածելու ժամանակը չեբ. պետք եր թրուչել, մտնել վորևե տան սրահի տակ, կամ գոմի մեջ պահվել, կամ՝ հասնել ջրաղաց, կտերը, բուխարու ծխներուղը, ձյունից և անձրևից պաշտպանող քարերից մեկի տակը մտնել: Այնտեղ տաք ե. ուտելու բան ել կճարվի:

Ուտելու բան...



Ծավիկ ծիտը հանկարծ հիշեց, վոր չեբեկ հատիկներ պահեց: Ուրախացած թռավ, հասավ հատիկների թափված տեղը, բայց, ինչքան դես-դեն ընկավ, չկարողացավ վորոշել հատիկների պահած տեղը: Ձյունն այնպես եր ծածկել, վոր վոչ մի նշան չեբ չեբևում:

Ծավիկ ծիտը հուսահատ, տխուր-տրտում ծվաց-ծվծվաց, ինքն իրեն նախատեց. «Ա՛յ հիմար, ասաց, — ո՞վ ե լսել, վոր ծիտը բան պահի, պաշար հավաքի. կուտելիր, ելի, քուչդ հո պատռելու չեբ»: Բայց անցածն անցած եր: Թևերը թափահարեց, թռավ դեպի մոտիկ գլուղը, քուշուշ արավ գոմի մոտերքը, մի կերպ կշտացավ ու գիշերեց գոմի դռան գլխի գերաններից մեկի տակ՝ պատի ու գերանի արանքի փոսիկում:

Ծավիկ ծիտն ամբողջ ձմեռն ապրեց գոմերի մոտերքը, տների սրահներում, խոտի գեղերի մեջ, զանազան մարազների ծղոտե տանիքների տակ, ջրաղացների պատերի ճեղքերում...

Յեւլ ախպետ, տեղից-տեղ փոխվելով, մի որ կիսա-
քաղց, մի որ կուշտ, գլուխը պահեց, մինչև որերը տաքա-
ցան, դարունը բացվեց:

*
*
*

Անձրև ե գալիս շփոփալեն, ձյունը հալեցնում:

Անձրևը դադարում ե թե չե՝ հիմի ել արևն ե շա-
րունակում հալեցնել:

Առուններ են հոսում քչքչալեն:

Կարծես գետնի տակ կրակ վառած լինեն ու ծուխ
բարձրանալիս լինի:

Գետինը բացվել ե: Յեթե առաջ ճերմակ վերմակով
եր ծածկված, այժմ նուրբ կանաչ թավիշե շապիկ ե հա-
գել: Ծառերի դալար ճյուղերի վրա կանաչավուն աչիկ-
ներ են բացվել ու կարծես ժպտալիս լինեն:

Ողբ թարմ ե, դուրեկան ջերմություն ե ամեն տեղ:

Յերեխաները հացենու դալար ճյուղերից թուփակներ
են շինել, սուլում են ու խաղում: Հեռու տեղերից սար-
յակներ են լեկել, լերգում են ու բուն հյուսում իրենց
համար: Նորելուկ գառները, ուլերը, հորթերը թռչկոտում
են սարալանջերին, մայում և իրենց զվարթ ձայնը մի-
ացնում թռչունների ճովողյունին, առվակների քչքչո-
ցին, լերեխաների լերգին ու սուլոցներին:

Ուրախություն ե ամենուրեք, լերգ ու խաղ, վար
անողների ցնծագին աղաղակներ, հորովելներ...

Ծավիկ ծիտն ել ե ուրախ: Վոստոստում ե, թռչկո-
տում, ճտճտում. իր համար նոր բուն ե շինում: Զյունն
ու անձրևը հին բունը փչացրել են, փտեցրել:

*
*
*

Մի որ ել, լերբ Ծավիկ ծիտը լերկար աշխատել եր
բունը շինելու վրա, հոգնել ու սովել եր, հիշեց իր պա-
հած հատիկները, թռավ, վոր գտնի, հանի, ուտի:

Գետինն այժմ ձյունով ծածկված չեր:

Ծավիկ ծիտը հեշտ գտավ պահած հատիկները տեղը,
բայց դարմացավ, լերբ տեսավ թե ինչպես իր փոսիկ-
ների միջից ինչ-վոր կանաչ, իր լեզվի չափ լեզվիկներ
են դուրս լեկել:

Նա հարց տվեց լեզվիկներին:

Ա՛յ լեզվիկներ, լեզվիկներ,

Սիրուն, կանաչ լեզվիկներ,

Գետնի տակին չե՞ք տեսել,

Կարմիր ցորնի հատիկներ:

Լեզվիկները, վոր Ծավիկ ծիտ պահած հատիկներից
ելին ծելել, կամացուկ փափսացին իրար հետ ու նրանցից
մեկը պատասխանեց.

Ծիտիկ-միտիկ չալ ծիտիկ,

Ի՞նչ ես ասում, ի՞նչ հատիկ:

Հատիկն ինչ ե, չգիտեսք.

Մենք ցորենի արտիկ ենք:

Բայց չալ ծիտիկ, լավ ծիտիկ,

Ա՛յ թռչկոտող վոստ-վոստիկ,

Վոր թռչում ես դեպի վեր,

Դեպի արև, դեպ ամպեր,

Ի՞նչ կլինի մեզ համար

Գնա մի քիչ արև բեր:

Յեղանակը շատ խառն ե,

Հողն ել—խոնավ ու սառն ե.

Շատ ենք մրսում, դողդողում,

Ես անարև սև հողում:

Ծավիկ ծիտը լսեց ծիլերի խնդիրը, ճտճտաց, թռավ
վեր, դեպի արևը, վորի լերեսը ծածկել ելին ամպերը,
անցավ, հասավ արևին ու ասաց.

Ծավ ծիտիկից քեզ բարև,

Ա՛յ դու պայծառ, վառ արև:

Ծավ ծիտիկիս ականջ դիր,

Տես, թե ինչ ե իմ խնդիր:



Մի արտ ունեմ, փոքրիկ արտ,
Սիրուն, կանաչ, հողի զարդ,
Բայց մըսում ե անարև:
Արև, արև, ջան արև,
Շատ խնդրում եմ տուր մի շող,
Մի ճառագայթ—ցուրտ մաշող,
Վոր հողին տամ—չորանա,
Իմ արտիկն ել—զորանա:

Արևը լսեց, լսեց Մավիկին ու ժպտաց: Ամպերը չը-
գիմացան արևի ժպտին, կամաց-կամաց լետ քաշվեցին:

Արևը կես ծիծաղով, կես ծաղրով ասաց.

Ծիտիկ-միտիկ ծավ ու չալ,
Համ բոբլիկ ես, համ քաշալ:
Յետ դառ հանգիստ ու գնա,
Արտիկդ արև կունենա:

Ծավիկ ծիտը թռավ ցած, տեսավ իսկապես արևի շո-
ղերն ընկել են ծիլերին, վորոնք ժպտալով խաղի լեն
բռնվել շողի ու ցողի հետ:

«Այս լավ ե,—մտածեց Ծավիկը,— ծիլերը հիմի
կմեծանան, արտ կդառնան: Գնամ բունս շինեմ, վերջաց-
նեմ, վոր ձու ածեմ, ձուտեր հանեմ: Ծուտիկներս կմե-
ծանան, արտն ել կհասնի, ուտելիքի կարիք չենք ունե-
նալ»:

* *

Ծավիկ ծիտը բուն շինեց, վեց-յոթը ձու ածեց:
Նստել ե Ծավիկը չալպտուրիկ ձվերի վրա, վոր տաքաց-
նի, նրանցից ձուտիկներ հանի:

Ծավիկը բունը թողնում ե միայն ալն ժամանակ,
լերբ ուտելու կարիք ե զգում: Իսկ ուտելու բան այժմ
չատ կա: Ուրիշ բան վոր չլինի, այգիներում հասած
թութն ու կեռասը բավական են:

Մի որ ել, լերբ Ծավիկը վերադառնում եր այգուց՝
քուչը լիքը թթով, շոգից շատ նեղացավ, իջավ, վոր
առվակում լողանա, հովանա:

Թևերը փոփոացնելով լողանում ե Ծավիկը, ուրախ
ծվծվում, ճտճտում: Ո՞վ կա նրանից ավելի լերջանիկ...

Յերբ լողանալը վերջացրեց, թառեց ջրի վրա կռա-
ցած ուռնու ճուղին, վոր արևը ցամաքեցնի թևերը:
Ծավիկի աչքն ընկավ դիմացի բլրի լանջին: Ի՞նչ տեսնի...
Ինչքան խոտ կա՝ վոտի վրա չորացել ե:

Ծավիկը հիշեց իր արտը, թռավ, վոր տեսնի արտը
հո չի՞ չորացել:

Հասավ ու ի՞նչ տեսավ...

Առաջվա դալար, կանաչ ծիլերը, ճիշտ ե, բարձրացել
են, բայց ցողունները դեղնել են: Գունատ, նիհար, հա-
ղիվ են տեղները կանգնած մնում: Հասկ ել չի լերևում:
Այսքանը բավական չե, արտի չորս բոլորը, ինչպես և ցո-
ղունների շարքի մեջ, լերկացել են զանազան տեսակի
մոլախոտեր, կոծոծ, կառը, վորոնք ավելի ուժեղ են, և
քիչ ե մնում խեղդեն արտի խեղճ ցողունները:



— Ի՞նչ ե պատահել ձեզ, ինչո՞ւ չեք այդպես նիհար,
դեղնած,—հարցրեց Ծավիկը զարմացած:

Յողոճներին մեջ, վոր մյուսներից ավելի լավ
գրության մեջ եր, հազիվ լսելի ձայնով պատասխանեց.

Արեն արեց, արեւ...

Արեն ալրեց, արեւ...

Թափեց բոցեր, թափեց հուր...

Վա՛յ մի քիչ ջուր, մի քիչ ջուր...

Ծավիկ ծիտն անմիջապես թռավ դեպի առվակը,
վորի մեջ հենց նոր լողացել եր, վորպեսզի ջուր բերի, կամ՝
խնդրի, վոր առվակը հոսի դեպի արտը և ջրի:

Առվակը ծիծաղեց Ծավիկի պատմության վրա:

Վոչ փարչ ունես, վոչ ել կուժ,

Վոչ խելք ունես, վոչ ել ուժ.

Ջուրն ինչո՞վ ես տանելու...

Հու, հու, հու, հո՛ւ, հու, հու, հո՛ւ...

Ու հրհռալով հոսեց առվակը:

Ծավիկը մի քիչ շմած մնաց, աչքերը ճպճպացնելով,
հետո ցատկոտելով հասավ մանրիկ կոհակներով հոսող ու

ծիծաղող առվակի ալիքներին և խնդրեց, վոր սովորեց-
նեն, թե ի՞նչպես անի, վոր ջուր հասցնի արտին:

Մի կշկշան կոհակ Ծավիկին խղճաց ու պատասխանեց.

Թռի՛ր վերև, դեպի վեր,

Դեպի չերկիրնք, դեպ չեթեր,

Կպատահես դու ճամպին—

Հպարտ, փքված սև ամպին,

Ասա նրան— անձրև տա:

Նա չի մերժի. հավատա:

Ծավիկ ծիտն ուրախացավ: Գլխով շնորհակալության
նշան արավ կոհակին ու թռավ դեպի չերկիրնք: Գնում ե,
գնում, բայց ամպ չի լերևում: Արեն ե վերեկից ծիծաղում,
ծիծաղում ու դաղում:

Մեկ ել քամի բարձրացավ, ուժեղ քամի: Ծավիկին
դես-դեն ե գցում: Ծավիկի շունչը կտրում ե. ուզում ե
իջնի ցած, բայց հանկարծ աչքովն ե ընկնում մի ամ-
պի կտոր, վոր լողալով գալիս ե:

Ծավիկն ինչ ուժ ունի հավաքում ե, թռչում դեպի
մոտեցող ամպը: Բայց դեռ նրան չհասած, տեսնում ե,
վոր մեկ ուրիշ, ավելի մեծն ե գալիս:

Ծավիկի ուրախությանը չափ չկա: Նա թռչում ե դե-
պի մոտեցող ավելի մեծ ամպը:

Բայց այս ի՞նչ պատահեց: Մթնեց կարծես, ալլևս
արև չի լերևում: Քամին ամպերի գնդերն իրար գլխով
ե տալիս: Ծավիկը քիչ ե մնում կորչի ամպերի մեջ:

Ի՞նչ ել բարկացած են ամպերը... Կռվում են, ինչ ե:
Աղմուկ ե:


Ծավիկը, թեև վախեցավ, բայց սիրտ արավ, մոտե-
ցավ մի ուռած-փքված ամպի ու ասաց.

Ամպերի պես, ահանջ դիր,

Քեզնից ունեմ մի խնդիր:

Իմ արտին քիչ անձրև տուր,

Չորանում ե առանց ջուր:



«Լա-մ-վ, հե-ռո՛ւ»... Այնպես գոռաց ամպը, վոր
Ծավիկը քիչ մնաց ուշաթափվեւր:

Անձրե սկսեց, ինչ անձրե, կատարյալ սեւավ, հեղեղ:
Ծավիկը հագիւմ հասավ իր բունը:

Առավոտյան Ծավիկ ծիտը թռավ, վոր տեսնի, թե
ինչպես է իր արտիկը անձրեից հետո:

Արտի գեմքը պալծառ էր, բայց ավելի լավ տեսք
ունեւիրն մոլախոտերը:

Ծավիկը հարցրեց, թե ի՞նչպես են զգում հիմի ցո-
ղունները: Մեկը պատասխանեց, թե՝ լավ են, բայց ան-
հրաժեշտ է, վոր Ծավիկն իրենց ազատի մոլախոտերից,
վորոնք քիչ է մնում խեղդեն նրանց:

Ծավիկը մտածմունքի մեջ ընկավ: Ո՞վ կազատի ար-
տը մոլախոտերից...

Հիշեց, վոր գարնանը, գլուղի տղաներն ու աղջիկնե-
րը, ինչ վոր գործիքներով վռնչացնում էյին արտերում
բուսած մոլախոտերը:

Ծավիկը թռավ, գնաց գեպի գլուղ, վոր մեկն ու
մեկին խնդրի, վոր գա արտն ազատի մոլախոտերից:

Կես ճանապարհին հանդիպեց մի աղջկա: Ծավիկը
պտտեց աղջկա շուրջը, հետո դիմացը կանգնեց, գլուխ
տվեց ու ասաց.

Ա՛յ վարդերես լավ աղջիկ,
Ա՛յ ծաղկաշոր վարդ-փնջիկ,
Արի գնանք արտիս մոտ,
Տես, թե ինչքան մոլախոտ,
Կառ ու կոծոծ, գեշահոտ
Արտիս գլխին բոլորել,
Խեղճի շունչը մոլորել—
Կուզեն խեղդեն: Վա՛յ իմ արտ...
Ջան լավ աղջիկ, ցող ու վարդ,
Արի արտըս դու գատիր,
Մոլախոտից ազատիր:

Աղջիկը լսեց Ծավիկին ու զարմացավ, վոր Ծավիկն
այդքան ուշ է ուզում արտի «ալան քաշի»:

Ամառը քիչ է մնում կես լինի, դաշտ տեղերում գա-

ըին համարյա հասել է, շուտով հունձը կսկսվի, իսկ Ծավիկն արտը մոլախոտերից ազատելու մասին է խոսում: «Ծախ խելք» վոր ասել են, իսկ վոր սա չէ,— ինքն իրեն մտածեց աղջիկը և քմծիծաղ տվեց: Գնա՛, թե չե՛... Ծիտն ինչ է, թե իր արտն էլ ինչ լինի...

Բայց և այնպես վորոշեց չմերժել Ծավիկի խնդիրը: «Գնանք,— ասաց աղջիկը,— տեսնենք եդ ի՞նչ տեսակ արտ է, վորին մոլախոտերն ուզում են խեղդեն»:

Ծավիկն ուրախացավ. թուրալով առաջ ընկավ, աղջիկն էլ նրա յետևից:

Տեղ հասան:

Աղջիկը տեսավ, վոր Ծավիկի արտը մի քանի ցողունից է բաղկացած, ծիծաղեց:

«Ծախ արտն էլ այսքան կլինի», — ինքն իրեն ասաց նա, — ապա դանակը հանեց, կտրատեց ու արմատախիլ արեց մոլախոտերը, Ծավիկի արտն ազատեց ու ինքը ճանապարհ ընկավ դեպի տուն, Ծավիկին ասելով.

Ծիտիկ-միտիկ խատուտիկ,

Չալպտուրիկ պուտ-պուտիկ.

Արտդ կաճի, հասկ կտա,

Գնա՛ ուրախ ճրտ-ճրտա:

Ծավիկը թուրաց, աղջկանը գլուխ տվեց, շնորհակալութուն հայտնեց ու թռավ, գնաց իր գործին, հանգիստ լինելով, վոր արտը կաճի, լավ բերք կտա:

*
* *

Հունձն ընկել է: Վա՛յ նրան, ով կուշանա, ժամանակին չի հնձի իր արտը: Յողունները կշորանան, հասկերը կծղած կթափվեն, կդառնան մկների բաժին: Թըռչուններն էլ մյուս կողմից վրա կտան արտին, հատիկները կուտեն:

Ծավիկ ծախ արտն էլ է հասել, բայց հնձող չկա: Ծավիկն զբաղված է իր ճուտիկներով, վորոնց հարկավոր է կերակրել: Ծավիկն ամբողջ ուրը թռչում է, մժեղներ

վորսում, բերում, բաժանում ճուտիկներին, վորոնք դեռևս չեն կարողանում թռչել. թույլ են, թևերն էլ դեռ ամուր փետուրներ չունեն:

Մի որ Ծավիկը նկատեց, թե ինչպես դաշտերում այլևս վոտի վրա արտ չկա. հիշեց իր արտը, թռավ, վոր տեսնի, թե ինչ դրության մեջ է: Հասավ, տեսավ, վոր արտը բոլորովին դեղնել է, չորացել: Ծավիկը հարցրեց.

— Եդ ի՞նչ է պատահել ձեզ, չլինի՞ նորից ծարավ եք: Գնամ ամպին խնդրեմ, վոր անձրև տա...

Հասկերն որորեցին իրենց գլուխները: Նրանցից մեկը պատասխանեց.

Վոչ թե անձրև, ա՛յ Ծավիկ,

Դու մեր պաշտպան, մեր լավիկ.

Հնձվոր է պետք ու մանգաղ,

Քաղվոր է պետք, չե՞րդ ու խաղ:

Ծավիկը մտածմունքի մեջ ընկավ, թե վճռեղից հնձվոր գանի, բայց հիշեց, վոր սարի կողմը դեռ հունձը չի վերջացել, թևին տվեց, հասավ մի խումբ հնձվորների:

Ծավիկը պտտեց հնձվորների չորս բոլորը, ապա մտեցավ մեկին ու ասաց.

Մի արտ ունեմ, հասած արտ,

Բայց չեմ գտնում վոչ մի մարդ,



Վոր գա հնձի, տանեմ տուն:
Մատաղ լինեմ քո վորդուն,
Արի, հնձի, ա՛յ ջանի,
Թե չե՛ մուկը կտանի:

Հնձվորներին մեկը հարցրեց Մավիկին լսողին.

— Եդ ի՞նչ ե ասում եդ ծիտը:

— Ասում ե մի հասած արտ ունեմ, լեկ հնձի:

— Հետո՞. վարձդ տալի՞ս ե, — ծիծաղելով ասաց նույն հնձվորը:

— Վարձի մասին չեմ խոսել. մի բան կտա ելի, — իր մշակին սոված հո չի՞ պահիլ:

— Եդ ծտերի արտերը շատ մեծ են լինում, մենակ չես կարող հնձել, լեկ, մեզ ել մշակ վարձի, միասին հընձենք, — ասաց մեկ ուրիշը:

Այս խոսքի վրա ամենքը ծիծաղեցին:

Մավիկը կանգնել սպասում ե, թե ինչով ե վերջանալու հնձվորների ծաղրը:

Խմբից մեկը Մավիկին հարցրեց.

— Ճուտեր ունե՞ս, ա՛յ ծիտ:

Մավիկը պարծանքով պատասխանեց.

— Ունեմ, ունեմ ճուտ-ճուտիկ,
Նախշուն, նախշուն, պուտ-պուտիկ,
Չալտիկ-մալտիկ, խատուտիկ,
Դեղին կտուց, գորշ տոտիկ:
Յերգ են ասում — ճըտվտում,
Բնում խաղում — վըտվտում:
Շուտով, շուտով կթռչեն,
Աշխարհ-աշխարհ կըրջեն:

— Կեցցես ծիտ, — բացականչեցին հնձվորները:

— Վոր եդպես ե, ճուտեր ունես, մեզք ես, բոլորս կզանք, միասին կհնձենք արտդ, վոր ճուտերդ սոված չմնան, առաջներս ձյուն-ձմեռ ե գալու, — ասաց հնձվորներից մեկը:

— Դե, առաջ ընկիր, տեսնենք վորտեղ ե արտդ, — ծիծաղելով ասացին հնձվորները:

Մավիկն ուրախ ծտվտաց, ճըտճտաց, ընկավ հնձվորների առջև:

Վո՛նց ե թռչում հպարտ ու լերջանիկ:

Հնձվորները տեղ հասան, տեսան Մավիկի արտը փրվել ե բլրի լանջովը մին, հասել, հնձող ե կանչում:

Հնձվորները նայեցին Մավիկին, նայեցին արտին ու ասացին.

— Ա՛յ ծիտ, ես արտը հնձելու, վերջացնելու հնար չի լինիլ, լեթե չխոստանաս, վոր մեզ գաթա կուտեցնես ճուտերիդ հարսանիքին:

Մավիկը թե՛

— Կով եք ասում, ձեզ մատաղ: Դուք հնձեցեք, արտս չփչանա, չընկնի մկան բերանը, լես ել ձեզ խոսք եմ տալիս, ծտի ազնիվ խոսք, վոր լերք ճուտերիս հարսանիք անելիս լինեմ, ամենքիդ ել հրավիրեմ վոր գաք, գաթա ուտեք:

Հնձվորները համաձայնվեցին. մտան արտը՝ հնձեցին, հնձեցին, ամբողջ արտը մի խուրձն ել դուրս չեկավ:

— Գիտե՞ս ինչ, ա՛յ ծիտ, — ասաց հնձվորներից մեկը, — արտդ հնձեցինք, վերջացրինք, բայց ավելի դժվար գործը մնում ե: Հիմի հարկավոր ե, վոր սալլ գտնես տանես կալի մոտ, հետո ել պետք ե ձի կամ լեզներ ճարես, կալսելու սարք գտնես — լեղան, հորսլի, թի, կամը, ինչ գիտեմ — փոցխը, լեղան, խախալ... Հետո, չե՞ վոր ալսքան ցորենը տեղավորել կուզի. ջվալ ե պետք, տոպրակ, ամբար, հոր... Սրա դարմանը պահելու հնար չի լինիլ, մարագ ե պետք... Վո՛ր մեկն ասեմ: Ի՞նչ ե լինելու քո ճարը...

Մավիկը մոլորված մնաց, չգիտեր ինչ պատասխան տար: Նա հուսահատ բացականչեց.

— Ի՞նչ դժվար բան ե լեղել...

— Հապա վո՛նց գիտելիր... Հեշտ-հեշտ կուլ կտամ ցորենի հատիկները... Իսկ գիտե՞մ, թե մարդ ինչքան ե չար-

17210-58



չարվում, մինչև հատիկը ցանելուց հետո նորից հատիկ
ե դարձնում: Ուտելն ի՞նչ կա. ով ասես կուտի, դու
աշխատել ասա, աշխատել...

— Բա հիմի ի՞նչ անես, քեռի ջան,— ասաց Ծավիկը:

— Ի՞նչ պետք է անես. մեր ծիտն ես, քեզ հո չէ՞նք
թողնի վիզդ ծուռ մնա: Ես ցորենի անագին դեզերը, վոր
մնան ետտեղ անտեր-անտիրական, կեսը մուկը կտանի, կեսը
թռչուններն ու մրջյունները կուտեն, կտանեն, թե մի բան
եկ մնա, են ել թող ու թացը կփչացնի, կփտեցնի: Յեթե
համաձայն ես, յեկ եսպես պայման կապենք քեզ հետ:
Մենք կտանենք ես մեր հնձածը, կկալսենք, կպատրաս-
տենք ամեն բան. դարմանը մեզ կլինի, ցորենը քեզ: Մի
տոպրակ կբերես, ցորենդ մեջը կածենք, կտանես. մեր
պայմանի ու քո տված խոսքի համաձայն, յերբ վոր ցորենդ
աղաս ու գաթա թխես, մեզ կկանչես, վոր միասին ուտենք:

Ծավիկի ի՞նչին եր պետք դարմանը... Նա ուրախու-
թյամբ համաձայնվեց հնձվորների առաջարկին:

Հնձվորները, ամեն մեկը հասկերի մի փունջ ձեռնե-
րին, գնացին տուն, իսկ Ծավիկն շտապեց դեպի իր բունը:

*
* *

Որեր անցան: Ծավիկի ճուտերը մեծացան, թևավոր-
վեցին, բայց դեռ չէին կարողանում լավ թռչնել: Ծա-
վիկը թռչել եր սովորեցնում նրանց, ուտելիքի հոգս քա-
շում: Բավական ծիծաղելի էին ճուտիկները: Ինչպես նոր
վոտքի լեյած լերեխան գնում է գնում ու մեկ ել...
թրըմփ, ընկնում, ափսոսում ել Ծավիկի ճուտերը: Թռչում
էին, ընկնում, հետո վոստոստում, նորից թռչում: Ծավի-
կը է՛ ուրախանում եր է՛ ծիծաղում նրանց անկարողու-
թյան վրա:

Մի որ ել, Ծավիկի միտն ընկավ, վոր ժամանակն է
գնալու հնձվորների մոտ — իր ցորենը բերելու: Ճուտե-
րին պատվիրեց, վոր բնի մոտից շատ չհեռանան ու ին-
քը թռավ դեպի գյուղ: Յեկավ, տեսավ կալը կալսել են,

քամել ու ցորենը, կարմիր շեղջի պես, բլուր արել կա-
լի մեջտեղը:

Ծավիկը մոտեցավ, ծվծվալով բարևեց ծանոթ գյու-
ղացուն:

— Հը, ծիտ քույրիկ, յեկել ես ցորենդ տանես,—
հարցրեց գյուղացին:

— Հրամանք ես, դրա համար եմ յեկել,— պատաս-
խանեց Ծավիկը:

— Համեցե՞ք, համեցե՞ք, շատ լավ ես արել, վոր յե-
կել ես, դե, տոպրակդ բեր, տոպրակդ, ինչքան կտանի,
լցրու, տար,— ասաց գյուղացին:

Ծավիկը մնաց շվարած: Տոպրակ չունեմ:

— Տոպրակ չունեմ,— ծիծաղեց գյուղացին:

— Չունեմ, ի՞նչ անեմ,— հուսահատ ասաց Ծավիկը:

— Գնա, տատիկին խնդրի, թող մի տոպրակ տա, բեր:

Ծավիկը գնաց տատիկի մոտ ու խնդրեց.

Տատիկ, տատիկ, լավ տատիկ,
Ճուտերդ ապրեն, ջան տատիկ,
Տոպրակ կարի ինձ համար,
Տոպրակ ճարի ինձ համար,
Ցորեն լցնեմ, տանեմ տուն,
Մի վարձք արա քո հոգուն:

Տատիկը, վոր գլուխը կախ ցորեն եր խախալում,
իր աշխատանքն ընդհատեց, նայեց Ծավիկին ու ասաց.

Տո, անամոթի վորդի, անամոթ, յեկել ես կալից ցո-
րեն գողացել, հիմի ել տոպրակ ես ուզում, վոր տանես...
Աներես ծիտ վոր ասել են, իսկապես դու յես:

Ծավիկը նեղացավ տատիկից, վոր իրեն գող է հա-
մարում ու ասաց.

Ի՞նչ ես ասում, ա՛յ տատիկ,
Թե տարել եմ մի հատիկ—
Թող աչքերս կուրանան:
Աշխատանքս ո՞վ կուրանա...

Յորենն իմն ե, իմ արտից,
Ա՛յ, իմացիր քո մարդից:

Տատիկը տեսավ, վոր Ծավիկը համարձակ ե խոսում,
քիչ մեղմացավ, բայց հիմի ել նոր պատճառներ բերեց,
ասելով.

— Աղուն եմ փռում, թե չորանա՝ վրա չեք թռչում,
ուտում: Կալը քցում ենք թե չե՝ ել հո չենք կարողանում
ազատվել ձեր ձեռքից. քիչ ենք անում, ես կողմից հեռա-
նում եք, մյուս կողմից եք վրա տալիս: Գնա, քեզ ցո-
րեն չկա. ինչքան տարել ես, բավական ե:

Ծավիկը տեսավ տատիկը համառել ե, չի ուզում
տոպրակ տա, չետ չեկավ կալում կանգնած գլուղացու մոտ,
խնդրեց, վոր նա հասկացնի տատիկին, թե խակապես
Ծավիկն իր սեփական արտի ցորենն ե ուզում տանի ե
գող չե:

Գլուղացին ծիծաղեց ու ասաց.

Ա՛յ ծիտ, տատիկը մեղավոր չի վոր եղպես ե ասում,
քեզ ել գող ե համարում: Իսկապես դուք, ծտերդ, մեզ
շատ եք փաս տալիս: Մեկը հենց քեզ վերցնենք. ինչքան
կլինես մեր աջուն ինքնակոչ հյուր չեկած: Մեր թուլթն
ուտում եք, մեր կեռասն ուտում եք, մեր խաղողն ուտում
եք, մեր արտերը քանդում եք, արտը հնձում ենք, դեզ
անում, հասկերի գլուխը պահելով, ելի գալիս եք խցկվում
խրձերի մեջ, հասկերը կտցահարում, հատիկներն ուտում:
Դեզերը հանդից բերում ենք, կալի սրահում դարսում,
հիմի ել եստեղ եք գալիս, քանդում: Շատ ծտեր ել իրենց
բունը հենց կալի, սրահի, կալապանի գերանների արան-
քումն են շինում, վոր մոտ լինեն ու շատ ուտեն, վոր
մեկն ասեմ... Մեզ շինել եք ձեր մշակը, ինքներդ, ան-
բան, անգործ թափառում եք: Ի՞նչ անուն տամ ձեր
արարմունքին:

Ծավիկը գլուխ կախ լսում եր գլուղացուն ու մտա-
ծում, վոր վերջացած ե ամեն ինչ: Նա հուսահատ տխուր-
տրտում, ուզեց թռչել, հեռանալ, իր մեջ վորոշելով, վոր

գլուղացին իրեն ցորեն չի տալու, չերբ գլուղացին նո-
րից խոսեց.

— Ե՛հ, ծիտ քուրիկ, շատ դարդ մի անիլ, գիտեմ
ճուտերդ հիմի մեծացել են, նրանց հարսանիք ես անե-
լու, ես ցորենի հուսով ես: Տատիկին կհամոզեմ, վոր
տոպրակ տա, բայց ինչո՞վ ես տանելու, վոչ սալ ունես,
վոչ ձի, վոչ եշ: Տես, հրեն մեր հարևանի եշն արածում
ե բլրի գլխին. գնա խնդրի, վոր գա, ցորենդ շալակի,
տանի ջրաղաց: Ջրաղացպանին կխնդրես, վոր ցորենը
փռի ջրաղացի կտերը, չորացնի, հետո աղա, ալյուր անի,
վոր տանես հարսանիքի լավաշներ թխես: Չմոռանաս գա-
թա թխելը, ինձ ու իմ ընկերներին հրավիրելը:

Ծավիկն ուրախացավ, թռավ, նստեց եշի մեջքին ու
ասաց.

Իշուկ, իշուկ, բեռնատար,
Համ լերգասաց, համ ճարտար,
Խոսքս չանես անկատար,
Յեկ ցորենս ջրաղաց տար:

— Ի՞նչ ցորեն, ա՛յ ճրտ-ճտան... Ցորեն... Քեզ ո՞վ
ե տվել ցորեն, — հարցրեց եշը:


Ծավիկը պատմեց մի առ մի ցորենի պատմութունը,
ապա խոստացավ, վոր իշուկին կհրավիրի իր ճուտերի
հարսանիքին, պատիվ կանի, մի դեզ խոտ կտա նրան՝ իր
արած լավության համար:

Իշուկը համաձայնվեց:

Ծավիկն ու իշուկը չետ չեկան գլուղացու մոտ, տե-
սան, վոր ցորենն արդեն տոպրակի մեջ ածած, մի կողմ
ե դրված:

Ծավիկը շատ ուրախացավ, վոր տոպրակը մեծ ե:
Իսկ տոպրակը — պապի մաշված, քրքրված արխալուղի
կարկատորած գրպանն եր:

Գլուղացին տոպրակն ամրացրեց իշուկի մեջքին: Ծա-
վիկը փաս բարով ասաց գլուղացուն, շնորհակալութուն
հայտնեց, ապա թռավ, նստեց տոպրակին ու, հանդե գեպի
ջրաղաց:



Վսնց ե վագուժ իշուկը — լերգելով:

Վսնց ե հալարտ-հալարտ բազմել Ծավիկին ու ծրտ-ծրտացնում ե, վոր իշուկն ավելի վողեվորվի, արագաց-նի քայլերը...

Տեղ հասան:

Ծավիկը վաղուց ծանոթ եր ջրաղացպանին: Սա մի բարի ծերունի լեր — վոտից գլուխ ճերմակ: Ջրաղացպանի գլխի մագերն ու մորուքը ծերութունից ելին ճերմակել, իսկ հագուստները — ալյուրի փոշուց:

Հենց վոր իշուկը կանգ առավ ջրաղացի դռանը, ջրաղացպանը դուրս լեկավ, վոր տեսնի, թե ով ե աղուն բերել: Ծավիկին նկատելուն պես ուրախ-ուրախ բացա-կանչեց.

— Բարճվ, բարճվ, ալ Ծավիկ: Եդ ձեր ես կորել, չես լերևում. իսկի չես ասում, թե բարեկամ ունեմ, չես մտաբերում ինձ, չես գալիս ու տեսնես ինչպես եմ ապրում:

— Պապիկ ջան, — ասաց Ծավիկը, — կներես: Ի՞նչ անեմ. գարունը բացվեց թե չե՝ հողսերս շատացան: Ձու ածեցի, ձուտեր հանեցի. նրանց պահել-պահպանել պետք ե, թե չե... Հետո, աշնանը վար ու ցանք ելի արել. ար-տըս բուսավ, մի որ արև եր պետք, գնացի արևի, մի որ անձրև եր պետք, գնացի անձրև բերի, մոլախոտերից ազատել եր պետք, հազիվ մի աղջիկ գտա: Արտը հասավ, հնձող եր պետք, հնձող գտա, հիմի ել կախող եր պետք...

Վսրն ասեմ, վսրը թողնեմ. մինչև ես ամեն բանից պրծա, ելի հրես, ինչպես տեսնում ես, աշունը վրա չե հասնում: Եսքան չարչարանքի մեջ մարդ իրեն գլուխն ել կմոռանա, ուր մնաց թե քեզ նման ազիզ բարեկամին:

Հիմի ել, պապիկ ջան, ցորենս բերել եմ, վոր աղաս, ալյուր դարձնես, տանեմ, վոր լավաշ թխեմ, գաթա թխեմ, ձուտերիս հարսանիք անեմ: Ահագին քանակությամբ հյուրեր ունեմ — հնձվորները, արաս մոլախոտերից ազա-տող աղջիկը, արևը, ամպը, ես իշուկը, ազգական-բարե-կամներս, նոր խնամիներ կունենամ... Ո՞վ կիմանա, թե հարսանիքին վսրտեղից ասես մարդ չի գալ. նրանց պա-տիվ անել ե պետք: Պաշարս վոր շատ լինի, ցավս քիչ կլինի: Դրա համար ել չարչարվել, տանջվել եմ, վոր ես-քան ցորեն ունենամ:

— Կեցցես, Ծավիկ, կեցցես, վոր եդքան խելոք ես: Դե, իջիր, իջիր տոպրակդ ցած բերենք, աղունդ աղանք: Իմ պարտքս լինի, ձուտերիդ հարսանիքին մի լավ քեֆ անելը, — ասաց ջրաղացպանը:

Պապիկն ու Ծավիկը հազիվ-հազ իջեցրին ցորենով լի տոպրակը:

— Հա, ալ Ծավիկ, մոռացա ասեմ, թե աղունդ չո՞ր ե:

— Ձե, — պատասխանեց Ծավիկը, — իմ բարեկամ կալ-վորն ասաց, թե պետք ե փռես, վոր չորանա:

— Լավ վոր ասեցիր, ալ Ծավիկ, թե չե՝ քարը խմո-րակալելու լեր, քո ցորենն ել փչացնի, իմ գործն ել ջրատի: Դե, դու իշուկին տար ես պարտեզն արա, թող իրեն համար արածի, մինչև չես աղունը փռեմ ջրաղացի կտերը:

Ծավիկը լերբ վերադարձավ, տեսավ պապիկն արդեն աղունը փռել ե: Արևն իսկույն չորացրեց աղունը:

Պապիկը ջրաղացի ջուրը կապեց, Ծավիկի աղունն ել ածեց տաշտի մեջ:

Ջրաղացի քարը հռնդալով պտտվում եր ու աղում Ծավիկի ցորենը: Պապիկն ել — պոչատ թիակը ձեռին — ալ-յուրը լցնում եր տոպրակը և զրույց անում Ծավիկի հետ:

— Այ՛ ծավիկ, — ասաց պապիկը, — ալլուրդ պատ-
րաստ ե. բայց ի՞նչպես ես գաթա թխելու, չուղ ունե՞ս,
մեղր ունե՞ս...

— Չունեմ. հիմ ե տվել ինձ չուղ կամ մեղր, — պատաս-
խանեց ծավիկը:

— Հապա հիմ ե տեսել առանց չուղի ու մեղրի գաթա:
Ասենք թե լավաշները կարելի չե թխել առանց չուղի ու
մեղրի, բայց չե՞ վոր դու մարդկանց գաթա չես խոստացել.
խոստումդ պետք ե կատարե՞ս, թե չե: Չե՞ վոր մի որ ելի
գործ կունենաս, կդիմես նրանց: Ի՞նչ չերեսով կխոսես
հետները...

— Հապա ի՞նչ անեմ, պապիկ ջան, — հարցրեց ծավիկը:

— Ինչ անեմ: Ալլուրդ կտանես տուն, չոր տեղ կպա-
հես, վոր չփչանա. լավ կլինի մի ծառի փշակում պահես,
բայց զգուշ կաց վոր մկները չծակեն տոպրակը, կամ
սկյուռը՝ տեղը չիմանա: Կթուչես, կգնաս սարը, կգտնես
նախրապանին ու կխնդրես, վոր քեզ չուղ տա: Հետո
կգտնես մեղվին ու կխնդրես, վոր մեղր տա: Յուզն ու
մեղրը վոր պատրաստ լինի, կգնաս գյուղը, կխնդրես մի
տատիկի, վոր տաշտ տա, մաղ տա, շուր տաքացնելու
համար կաթսա տա: Յերբ ես ամենը պատրաստ լինի,
կխնդրես տատիկին, վոր թույլ տա հարսիկին հետդ գալու,
վոր խմորը հունցի, գաթա թխի, լավաշ թխի:

Անտառին պետք ե խնդրես, վոր փայտ տա, աղբյուրին
պետք ե խնդրես, վոր շուր տա, բրուտին պետք ե խնդ-
րես, վոր փարչ տա շուր բերելու համար, կացնին պետք
ե խնդրես, վոր փայտ կտրտի փռան համար: Աղ ե պետք,
աղը չես կտամ, կրակն ել չես կտամ — բայց փուռը, ա՛յ,
սա քիչ դժվար գործ ե, ինքդ չես կարող փուռը շինել.
ելի պետք ե խնդրես մի տատիկի, վոր իր փուռմը
թխի, — ասաց պապիկը և, կոկորդը մաքրելով, ուզում եր
շարունակի, չերբ ծավիկն ընդհատեց նրան, ասելով.

— Կաց, կաց, ջրաղացպան պապի, եդ ինչե՞ր ես ասում,
եդքան բանը չես վճնց անեմ... Եդ ի՞նչ դժվար բան ե
լեղել...

— Հապա վճնց դիտելի՛ր ծավիկ ծիտ, հարսանիք անելը
հեշտ գործ ես կարծում, գաթա թխելը հանաք-մասխա-
րություն ե, ի՞նչ ե...

Ծավիկը հուսահատվել եր — լսելով ջրաղացպան պա-
պիկի ասածները: Նա մինչև անգամ մտածեց ամեն բան
թողնի ու փախչի, վոր ազատվի՝ աչդ գալիք անագին չար-
չարանքներից:

Պապիկը նկատեց, վոր ծավիկը խոր մտատանջու-
թյան մեջ ե ընկել, սիրտ տվեց.

— Այ՛ ծավիկ, շատ մի մտածի: Ամոթ ե, վոր մի գործ
սկսես ու կիսատ թողնես: Աշխատանքի մեծ մասն արդեն
վերջացրել ես, մնացածն ել ինչպես լինի, կավարտես:
Ծարդիկ վոր տեսնեն դու աշխատում ես, բայց բաներ
կան, վոր քո ուժից վեր ե, կոգնեն քեզ, ինչպես ոգնեցին
աղջիկը, հնձվորները և մյուսները: Գնա, իշուկը բեր,
ալլուրդ տար ու, ինչպես ասացի, համարձակ գնա նախ-
րապանի ու մեղվի մոտ: Աշխարհիս որենքն եսպես
ե — մեկը մյուսով կլինի, միմյանց ոգնելով, աջակցելով
կլինի, մի հուսահատվի: Մի գաթա թխելը վոր եդքան
դժվար ե թվում քեզ, հապա վոր հարսանիքի համար շո-
րեղեն առնելու լինելի, կոշիկներ կարել տալու լինելի,
գինու հոգս ունենալի, վոր մեկն ասեմ — վոչխար մորթել
կա, քիշմիշով փլավ եփել կա, խալիչա գործել կա, խաս
կտորից կարած անկողին կա, ամանեղեն առնել կա...

— Ել մի շարունակի, — ճշած ծավիկը և ուշաթափվեց,
լսելով ջրաղացպանի վերջին խոսքերը, վորոնք ավելի ու
ավելի ելին դժվարացնում հարսանիքի գործը: Ջրաղաց-
պանը վեր թռավ տեղից, մի փարչ շուր ածեց ծավիկի
գլխին, ուշքի բերեց:

Ծավիկը, խելքը գլուխը հավաքելով, ջրաղացպան պա-
պիկին հայտնեց, վոր ինքը հրաժարվում ե և՛ ալլուրից,
և՛ գաթա թխելու մտադրությունից, և՛ հարսանիքից:

— Ճուտերս թող թուչես, գնան ուր կուգեն, չես ել
գլուխս կառնեմ մի տեղով կկորչեմ, — ասաց ծավիկը:

Չէ, եղբայրս չի կարելի,— պնդեց ջրաղացպանը։— Ուզում ես ամբողջ աշխարհում խաղալ ու խալտառակ լինես... Ամոթ է, դու մի պատվավոր ծիտ լինես ու մի դատարկ բանի համար աշխարհ-աշխարհ կորչես։ Ել վրձն օրվա բարեկամն ենք, վոր քեզ չոգնենք։

Դե, հիմա լավ ականջ դիր, տես ինչ եմ ասում,— շարունակեց ջրաղացպանը,— Ալլուրդ կմնա ինձ մոտ, ջրաղացում։ Դու կգնաս լուղն ու մեղրը կճարես, կբերես։ Կմնա հուկնցել-թխելը, են ել միասին կանենք։ Քեզ կսովորեցնեմ, թե ում մոտ գնաս, վոր չմերժի ու գա։ Միկնուկն է, հարսանիքն աշնանն է լինելու, կամ՝ ձմեռը։ Թեև, դուք, ծտերդ գարնանն էք հարսանիք անում, բայց մենք աշնանը կանենք, մարդկանց սովորության համաձայն։ Աշունը լիառատ է, ամեն բան կճարվի։ Հարսանիքը կանենք ինձ մոտ, ջրաղացում։ Հետո հարս ու փեսա թող թըռչեն, գնան, իրենց համար ապրեն։

Դե, ել լերկար մի մտածի, վեր կաց, գնա իշուկը տար տուր իր տիրոջը, ինքդ ել գնա ճուտերիդ կերակրի ու թուի սարը, նախրապանի մոտ։ Մեղվի բանը հեշտ է, ուրիշ տեղ վոր չգտնես, ես հարևան այգում մեղուներ շատ կան, նրանցից կխնդրես, մեղր կտան։ Դե, վեր կաց, ել մի ուշանա, որը մթնում է, գործ շատ ունես։

Ծավիկը շնորհակալութուն հայտնեց ջրաղացպան պապիկին, գնաց, իշուկին տարավ գլուղ, հանձնեց տիրոջը, իսկ ինքը թռավ, վոր հասնի իր բունը, տեսնի ճուտերն ինչ գրության մեջ են։

Ճուտիկները հենց վոր Ծավիկին տեսան, անքառն ուրախացան, անքառն ուրախացան, վոր իրենց ուրախությամբ ուրախացրին և Ծավիկին։

Ճուտիկները շրջապատեցին իրենց մորը, նրա համար լերգեցին, պարեցին, հետո մոտը պառկեցին ու քնեցին։

Ծավիկը, վոր շատ եր հոգնել, խոր քնի մեջ ընկավ։ Թեև մեկ-մեկ խոր քունն ընդհատվում էր զանազան լերագնեքով։

Ծավիկը լերագում տեսնում էր ջրաղացպանին, տատիկին, վոր չեր ուզում տոպրակ տալ, իշուկին և այսպես շարունակ...

*
* *

Լույսը դեռ չեր բացվել, չեր Ծավիկն արթնացավ, ճուտիկներին պատվիրեց, վոր հեռուները չգնան ու ինքը թռավ դեպի սար։ Դեռ հեռվից նկատեց, վոր սարալանջով փռված արածում է նախիրը։

Ծավիկը մոտեցավ, կովերին բարևեց, ապա գլուխ տալով նախրապանին, ասաց.

Այ նախրապան, նախրապան,
Հորթ ու կովի պահապան,
Սարերի տեր-տիրական,
Քաջ ու անվախ, պատվական.
Ականջ արա Ծավիկին,
Շատ ճուտամեր հավիկին.
Ման եմ լեկել գլուղից-գլուղ,
Բայց չեմ ճարել կովի լուղ.
Ինձ լուղ է պետք, մի քիչ լուղ,
Մի քիչ մեղր, ծառի ճլուղ.
Մի քիչ ել ջուր, քիչ ել աղ,
Մի լավ տատիկ, տաշտ ու մաղ.
Ալլուր ունեմ, մի շանթա,
Հուկնցենք, թխենք մի գաթա,
Անենք մի մեծ հարսանիք,
Ճուտիկներին հարս անենք։

Նախրապանը լսեց, լսեց Ծավիկին, մտքումը մի քիչ ծիծաղեց վրան ու ասաց.

Այ ծիտ, եղ ինչե՞ր ես ասում։ Ո՞վ է տեսել, վոր ծիտը գաթա թխի, հարսանիք անի, հենց գիտես միամիտ նախրապան ես գտել, վոր ինչ ասես հավատա։

— Ճուտերին արևը վկա, ճշմարիտ եմ ասում. թե չես հավատում, լեկ, գնանք ջրաղացպանի մոտ. ալլուրս ջրաղացումն է,— պատասխանեց Ծավիկը։

— Ես ասենք թե հավատացի, վոր ալլուր ունես ջրադացալանի մօտ, վորից գաթա ես թխելու, հարսանիք անես, հետո ի՞նչ: Հենց գիտես յուզ գտնելը հեշտ ե: Կարծում ես յուզը գրպանումս ե, վոր հանեմ, տամ քեզ: Պետք ե ես սարին խնդրես, վոր խոտ տա, խոտը կո՞նք ուտի, վոր կաթն անի: Հետո պետք ե գնաս բինեն, մեր հարսին խնդրես, վոր կովը կթի, կաթնից մածուն շինի, խնոցին կախ անի ծառի ճյուղից, հարևանի հարսին ել պետք ե խնդրես, վոր գա ոգնի, միասին հարեն խնոցին, վոր յուզ դուրս գա: Ես յուզը կարագ կլինի: Մեր տատին պետք ե խնդրես, վոր հալի: Հալած յուզն ել ջրի նման բան ե, ինչո՞վ կտանես: Պետք ե քամուն խնդրես, վոր փչի, յուզը սառցնի. ես սառած յուզից կկտցես ու կտցիդ ծերովը կտանես, թե չե, վոր թևիդ տակ դնես, կամ բերանդ առնես, յուզը նորից կհալվի, կկորչի: Յուզ ստանալու համար ելի մանր-մունր բաներ կան անելու, բայց չեմ պատմում: Իմացա՞ր:

Հիմի խելքդ ի՞նչ ե կտրում: Կարո՞ղ ես եսքան գործն անես, վոր յուզ ստանաս:

— Վա՛ւ... Եդ ի՞նչ դժվար բան ե լեղել, — հուսահատվեց Ծավիկը:

— Հապա վո՞նց գիտելիր, կարծում ես ուրիշի փռած աղուն ե, վոր թռչես, կտցես ու փախչես, թե՞ հասած արտ ե, վոր ուրիշը հասիլ բերի, դու հասկերը կտուտես, հատիկները կուլ տաս, քուչդ լցնես ու քեզ համար լերդ ասելով թռվոս... Մինչև չչարչարվես, չես իմանա, վոր «յուզը մածնիցն ե»:

Ծավիկը բոլորովին հուսահատվեց: Խոր մտածմունքի մեջ ընկավ: Ո՞վ գիտե, թե մեղուն ինչեր ե ասելու: Ինչ նոր դժվարություններ են առաջը գալու: Թող կորչեն գաթան ել, հարսանիքն ել, ճուտերն ել: Լավն ալն ե, վոր ինքն ալլես չվերադառնա իր բունը:

Նախրապանը նկատեց վոր Ծավիկը շատ մեծ մտա-տանջության մեջ ե, խղճահարվեց:

— Ա՛յ Ծավիկ, շատ խոր մտքի մեջ ընկար, — ասաց նախրապանը, — մեղք ես, շատ մի մտածիր, մի բան կանենք: Հազարից մի անգամ լեկել ես ինձ մոտ մի փոքրիկ խնդրով, չեմ մերժիլ: Յես միայն ուղեցի քեզ հասկացնեմ, վոր ամեն բան ձեռք բերելու համար աշխատանք ե պետք, իսկ դուք, ծտերդ աշխատանքի սովոր չեք: Բայց ինչպես լերևում ե, դու իմ ճանաչած ծտերի նման չես, դու աշխատավոր ծիտ ես: Յեկ գնանք բինեն, քեզ քիչ յուզ տամ, տար դործդ տես, բայց հարսանիքին չմոռանաս ինձ ել հրավիրես: Ծտի հարսանիք չեմ տեսել:

Ծավիկն ուրախացավ, շնորհակալության նշան արավ գլխով ու նախրապանի մահակի ծայրին նստեց, հետք դնաց բինեն:



Նախնայանքը կես գլխով լուրջ փաթաթեց տերևի մեջ,
թելով կապեց: Ծավիկն ել թելից կտցեց ու թռավ դե-
պի ջրաղաց:

Ջրաղացական պապիկը լուրջ վերցրեց ու Ծավիկին
ուղարկեց մեղվի մոտ, հայտնելով, վոր Ծավիկը մեղրն
եւ վոր բերի, գաթան թխելու հողան ինքը, պապիկը կքաշի:

Ծավիկը շատ եր հոգնել. թռավ դեպի իր բունը,
ձուռերին գլխին հավաքեց, պատմեց նրանց սարերի ու
նախնայանքի մասին, հետո քուն մտավ, վոր առավոտը
գնա մեղվի մոտ:

* *

Լուսադեմին Ծավիկը դեռ աչքը չեր բացել, քեր
ախանջին հասավ մեղվի տըզոցը:

Ծավիկը վեր թռավ տեղից, ականջները սրեց, վոր
իմանա, թե ձայնը վոր կողմից ե գալիս: Հազիվ վորոշեց
տեղը: Ծավիկը թռավ, վոր դանի ձայնի տիրոջը — մեղ-
վին, բաց չկարողացավ: Ծավիկը ձայն տվեց, պատաս-
խան չստացավ: Նստեց մի թփի, ավելի լարեց լսողու-
թյունը, վոր լսի մեղվի լերդը: Քիչ անց, նորից նույն
տզոցը կրկնվեց, բաց մինչև Ծավիկը վրա կհասներ, ձայ-
նը նորից կարվեց:

Բանն ախ ե, վոր լույսն ել այնքան չեր բացվել,
պարզվել, վոր Ծավիկը կարողանար գոնե տեսնել մեղվին:
Իսկ մեղուն «լերդում եր» միմիայն թռչելու ժամանակ,
ինչպես Ծավիկը հասկացավ, նա ծախ նման չեր, վոր
թռչելիս ել լերդեր, նստած ժամանակ ել: Իսկի Ծավի-
կի խելքը կրկտրեց, թե մեղուն չի լերդում, այլ՝ լսվող
ձայնը՝ տզոցը, դա մեղվի թևերի և ողի շփումից ե առաջ
գալիս, քեր մեղուն թռչում ե:

Այսպես, Ծավիկը մեղվի ձայնի վրա թռչելով, թռչե-
լով, վերջապես տեսավ նրան մի մրգառատ այգու մեջ,
ուր գանազան տեսակ պտուղներ ել կալին, խաղող ել:

Մեղուն թռչում եր, կանգ առնում վորևե խաղողի

ճաքած գլխով վրա, փոքրիկ կնճիթով ծծում հյութը,
հետո անցնում ծառի տակ ընկած վորևե մրգի՝ տանձի
կամ խնձորի, նորից ծծում, դարձյալ անցնում մեկ ու-
րիշ մրգի, և այսպես շարունակ:

Ծավիկը կարծում եր, թե մեղուն հոտ ե քաշում և
զարմանում եր, թե ինչ հոտոտելու բան ե խաղողը կամ
կես-հոտած տանձը, վոր մեղուն հոտոտում ե: Ծաղիկ հո-
չե...

Ծավիկը շատ եր տեսել գարնանը և ամառը, թե
ինչպես մեղունները ծաղիկից-ծաղիկ են թռչում և «հոտո-
տում» անուշաբույր ծաղիկները, բաց վոր նրանք «հո-
տոտելին» նաև մրգեղենը, դա առաջին անգամ եր տեսնում:

Մեղուն այնքան արագ եր փոխում իր տեղը, վոր
Ծավիկը չեր կարողանում նրա հետ խոսի: Վերջապես
հարմար ժամանակ գտավ ու դիմեց մեղվին. —

Մեղու, մեղու, մեղրի ծոր,
վոր թռչում ես սար ու ձոր,
Հա թռչում ես, հա թռչում,
Հա շրջում ես, հա շրջում,
Ականջ արա, կանգ առ քիչ,
Այ մեղրատեր մեղմ լերդի:
Պատրաստել եմ ամեն բան,
Բաց չի թխվի իմ գաթան,
Թե մեղրիցդ քիչ չտաս —
Կամ մի բաժակ, կամ մի թաս:

Բաց մեղուն իսկի ուշադրութուն ել չդարձրեց Ծա-
վիկին. առանց պատասխանելու, թռավ, հեռացավ:

Ծավիկը հուսահատ վերադարձավ ջրաղաց ու պատ-
մեց ջրաղացական պապիկին, թե ինչպես մեղուն իսկի չի
ել պատասխանել իրեն:

Պապիկը ծիծաղեց ու հայտնեց Ծավիկին, թե մե-
ղուն լերքեք դատարկ զրույց չի անում, մանավանդ աշ-
խատանքի ժամանակ: Իսկ չի պատասխանել, վորովհետև
մեղունների մոտ կարգ ու կանոն կա, ամեն մեկն իրա-

վունք չունի մեղը բաժանելու և խորհուրդ տվեց, վոր
Ծավիկը գնա մեղվանոց:

Ծավիկը հիմի ել թռավ, հասավ մեղվանոց:

Մեղվանոցը նման եր միմյանց վրա դարսած լեր-
կարածե քթոցներէ, վորոնց մեջ ապրում ելին մեղուները:
Սրանք փեթակներն ելին: Փեթակներէ առջևի մասը,
ներքեից բաց եր, վորտեղից մեղուները ներս ու դուրս
ելին անում: Սա արկանոցն եր, վորի առջև մեղուների մի
խումբ հավաքված ինչ-վոր տխուր լերդ եր տղտղտնում:
Այսպէս թվաց գոնե Ծավիկին:

Ծավիկը լենթադրելով, թե փեթակի ու մեղվանոցի
տեր-տիրականը հենց այս մեղուներն են, վոր կան, մա-
նավանդ, վոր սրանք մշուսներից ավելի խոշոր ելին,
մոտեցավ նրանցից մեկին ու կրկնեց իր խնդիրը. —

Մեղու, մեղու, մեղրի ծոր,
վոր թռչում ես սար ու ձոր,
Հա թռչում ես, հա թռչում,
Հա շրջում ես, հա շրջում.
Ականջ արա, կանգ առ քիչ,
Ա՛յ մեղրատեր մեղմ լերդիչ:
Պատրաստել եմ ամեն բան,
Բայց չի թխվի իմ գաթան,
Թե մեղրիցդ քիչ չտաս —
Կամ մի բաժակ, կամ մի թաս:

Մեղուները, վոր լսեցին Ծավիկի խնդիրը, ծիծաղե-
ցին, ինչպէս մեղուն կարող ե ծիծաղել, ապա նրանցից
մեկը դարձավ Ծավիկին ու ասաց.

— Անխելք ծիտ վոր ասել են, իսկ և իսկ դու լես:
Մենք ետեղ մեղրի կարոտ կոտորվում ենք, դու լեկել
ես մեզնից մեղր ես ուզում: Բա իսկի էս տեսնում, վոր
մեզ փեթակից դուրս են արել, վոչ միայն մեղր չեն տա-
լիս, այլ՝ ներս ել չեն թողնում: Մեղր ունես, բեր ուտենք:
Ծավիկը զարմացավ մեղվի ասածների վրա: Ինչպէս

թե դուրս են արել, միթե բոլոր մեղուները միատեսակ
չեն: Ծավիկը հարցրեց.

— Ինչո՞ւ լեն ձեզ դուրս արել: Միթե դուք չեք մե-
ղը պատրաստողները:

Մենք. չե, մենք միայն ուտողներ ենք: Մեր անու-
նը բոռ ե, մեղվի բոռ. աշունը մոտենում ե թե չե՝ մեզ,
իրեւ ձրիակերների դուրս են անում, կամ՝ կոտորում,
մեղվանոցի ու ամեն մի փեթակի որեքներէ համաձայն:
Բայց ես պատմութունը շատ լերկար ե, գլուխ չունենք
քեզ պատմելու, մանավանդ, վորքան մեզ հայտնի լե,
դուք, ծտերդ ևս ձրիակերներ եք: Դե, դե, հեռացիր,
տես, փեթակի պահապան զինվորը մոտենում ե, վոր խալ-
թի, կոտորի մեզ, տես, վոր քեզ ել չխալթի, — ասաց
բոռերից մեկը և արկանոցից հեռացավ: Հեռացան և մշուս-
ները:

Ծավիկը նկատեց, թե ինչպէս արկանոցից դուրս լեկավ
մի ժիր ու ջահել մեղու և հարձակվեց բոռերի վրա, քշեց
նրանց ու ինքը կրկին գնաց, արկանոցի մոտ պահապան
կանգնեց:

Ծավիկը մտաւտանջության մեջ ընկավ: Ի՞նչ անի հիմի,
ո՞ւմ դիմի... Ի՞նչ դժվար բան ե լեղել մեղը գտնելը:
Միթե չի կարելի առանց մեղրի գաթա թխել...

Այս մտքերի մեջ եր Ծավիկը, լերը նկատեց, թե
ինչպէս մի մարդ լերեաց: Մարդը լեկավ, սկսեց մեկ-մեկ
բաց անել փեթակների լետեի խուփը, նայել, թե ինչ ե
կատարվում ներսը, ապա կրկին ծածկելով՝ հերթով ան-
ցավ մշուսներին: Այս անելուց հետո, մարդն սկսեց փե-
թակների առջևի հրապարակը մաքրել, կոտորելով բոռերին:

«Ա՛յ, անիծված ձրիակերներ, անբաններ, չեն ել
կոտորվում», — ասում եր մարդը և անխնա վոչնչացնում
բոռերին:

Ծավիկը մտածում եր, ինքն իրեն ասելով. «Ինչո՞ւ
չեն բոռերը խալթում այդ մարդուն, պատժում»:

Ծավիկը վորոշեց, վոր այս մարդը մեղվանոցի տերն

ե լինելու, հարմար համարեց մեղրի համար դիմել նրան։
Այդպես ել արավ։ Ծավիկը պտտվեց մեղվապահի շուրջը,
կանգ առավ, նստեց մի ծառի ճյուղի և ասաց։

Այ մեղվապահ, մեղրատեր,
Յերկար ապրեն քո ճուտեր,
Ականջ դիր իմ ասածին,
Ելի դու կաց քո գործին։
Մեր ջրաղացպան պապիկը
Աղաց ցորնիս հատիկը,
Ալյուր արավ, վոր լուղով,
Գաղցր մեղրով ու աղով,
Գաթա թխի ինձ համար,
Լալեղական ու հարմար։
Հավաքել եմ ամեն ինչ,
Մեղր ե պակաս ինձ մի քիչ։
Շատ եմ խնդրում, հենց խնդաս,
Մի քիչ, շատ քիչ մեղր տաս։

Մեղվապահը նայեց Ծավիկին, հալացքով քննեց
նրան ու հարցրեց.

— Այ ծիտ, քեզ ջրաղացպանն ե ուղարկել ինձ մոտ։

— Հրամանք ես, ջրաղացպան պապիկը։

— Լավ, դու գնա, չես ինքս կգամ ջրաղացպանի մոտ,
կիմանամ բանն ինչու՞մ ե և, չեթե կարիք լինի, մեղր
կտամ։ Թե չե, խելոք ծիտիկ, ասենք թե հենց հիմի քեզ
մեղր տվի, ինչո՞վ ես տանելու... Իսկի գիտե՞ս, թե ինչ-
քան ծանր բան ե մեղրը, — ասաց մեղվապահը և ավե-
լացրեց, — շաքարով չի՞ կարող գաթա թխել, ինչ ե, ան-
պատճառ մեղր պետք ե լինի...

Ծավիկն ի՞նչ գիտեր, թե մեղրը ծանր ե. վոչ տա-
րել եր, վոչ կերել։ Ջրաղացպան պապից եր լսել միայն,
վոր մեղրը քաղցր ե և առանց նրան գաթա թխել չի կարե-
լի։ Հիմի ես մեղվապահն ել նոր բան ե ասում. սա ել
շաքարի անուն ե տալիս։ Ծավիկը վճռեղից շաքար
ճարի...

Ծավիկը մտածուր նորից չեկավ ջրաղացպան պապի-
կի մոտ, պատմեց ինչ վոր պատահել եր։

— Դե, Ծավիկ ծիտ, հիմի ալլևս մի մտածիր ուրիշ
բանի մասին։ Լավ ես արել, վոր մեղվապահին ասել ես,
թե չես եմ քեզ նրա մոտ ուղարկել։ Մեղվապահը բարի
մարդ ե, կգա, կխոսենք, մեղր կտա։ Դու հիմի գնա,
ով վոր քեզ լավութուն ե արել, ոգնել, հրավիրի հար-
սանիքի։ Տես, չմոռանաս ամենքին ել հրավիրես։ Ենպես
հարսանիք անեմ, ենպես հարսանիք, վոր վոչ վոք իր
որում վոչ տեսած լինի, վոչ լսած, — ասաց ջրաղացպան
պապիկը։

Ծավիկը թռավ, գտավ իր ճուտերին, վորոնք արդեն
մեծացել էին, թևավորվել, գեղեցկացել, նրանց ել վերց-
րեց իր հետ ու խմբով թռան, վոր բոլոր ծանոթներին
ու բարեկամներին հավաքեն հարսանիքի։

Ջրաղացպան պապիկն ել կանչեց տատիկները և, հարս-
ներին, վոր գան ջրաղաց, տաշտ ու մաղ բերեն, խմոր
հունցեն, լավաշներ ու գաթա թխեն Ծավիկի ճուտերի
հարսանիքի համար։ Մինչ այդ՝ մեղվապահն ել չեկավ,
խմացավ Ծավիկի ամբողջ պատմութունը և մեղրը տվեց,
ինչքան պետք եր։

Գյուղի աղջիկները չեկան շուր կրելու, տատիկները
չեկան, վոր գաթայի քաղցր միջուկը պատրաստեն, հարս-
ները չեկան, վոր խմոր հունցեն, ջահել աղաները չեկան,
վոր փալտ բերեն անտառից՝ փուռ վառելու և կերա-
կուրներ չեփելու համար, բրուտը փարչեր ու քրեղաններ
ուղարկեց, պղնձե ամաններ պատրաստող վարպետը կժեր
ու սինիններ ուղարկեց... Վճր մեկն ասեմ, վորը թողեմ։
Վողջ գյուղը մի ամբողջ շաբաթ զբաղված եր հարսանիքի
պատրաստութուն տեսնելով։

*
**

Հարսանիք եր, ի՞նչ հարսանիք...

Յեկան, չեկան, վորը ձիով, վորը վոտով, վորն ել
հեծած, վորը սալով... Ե՛լ նախրապան, ել մեղվապահ,

եւ հնձվորներ, կալ կալսողներ... Վո՞ր մեկն ասեմ: Ով հը-
րավիրված եր, լեկավ, հետն եւ մի քանի հյուր բերեց:
Ծախ հարսանիք եր, հանաք-մասխարութիւն չեր:

Ամպը տեսավ, վոր ջրաղացի առջևի լաջն հրապա-
րակը փողոտ ե, քիչ անձրև թափեց: Հարսն ու աղջիկը
ավելները վերցրին, հրապարակն ավելցին, մաքրեցին:
Ամպը լետ քաշվեց, հիմի եւ արևն իր շողերը փռեց,
վոր հարսանիքը դաջժառ լինի:

Սուփրա փռեցին հրապարակով մին՝ նստոտեցին:

Բերին, բերին Ծավիկի ալուրից թխած տաք-տաք
լավաշները, փռեցին սուփրի վրա:

Աշնան առատ ժամանակն եր: Սուփրան լցվեց հա-
զար ու մի տեսակ մրգեղենով: Ե՛լ տանձ, եւ խնձոր, եւ
դեղձ, ե՛լ խաղող, սերկեմիլ, ընկուլղ, փշատ, ունաբ, հոն,
զկեռ, մասուր... Զորացրած մրգեղենին եւ հո հաշիվ չկար:
Հապա ձմերուկը, սեխը, անուշահոտ շամամը, դուրման,
դդումը... Տեսակ-տեսակ բանջարեղեններ, — դաղձ, կոտեմ,
սոխ, քոնդառ, պղպեղի պարկ, պամիդոր, վարունգ, ճա-
կընդեղ, բողկ, կաղամբ, թթու դրած բոխի, շոնշոլ, խեշ լո-
բի, լեփած գետնախնձոր, խորոված լեզիպտացորեն... Ինչ
վոր լետ պակաս թողի, ախն եւ դու ավելացրու:

Հարսնիքավոր ծառերը թառել ելին ծառերին ու լեր-
գեր ելին լերգում՝ լերգչապետ կաշաղակի դեկավարու-
թյամբ, իշուկն իր գոռնան եր փչում, փայտփորիկը
թմբուկ եր զարկում, իսկ մկները թեւ հրավիրված չելին
հարսանիքի, բայց իրենք լեկել ելին ու պարում ելին:
Հոպոպն եւ վողեռում եր պարողներին ու նրանց թրոշ-
կոտելու հետ՝ շարունակ գոչում եր, — «հոպ, հոպ»: Գոր-
տերն եւ հեռվից դիտելով այս ընդհանուր ուրախութիւ-
նը, շարունակ գոչում ելին — «ուռուռ, ուռուռ»...

Ուրախութիւնն ախճան մեծ եր, վոր մարդիկ ա-
ռանց գինի խմելու, բոլորն եւ հարբել ելին:

Քեֆի ամենատաք ժամանակ ջրաղացպան պապիկը



հատկապես շինած նոր փռնից հազիվ-հազ հանեց գաթան,
հարյուր մարդ կանչեց ոգնութիւն, վորոնք գլորելով,
գլորելով, գաթան բերին ու դրին սուփրի մեջտեղը:

Գաթան չտեսնված գաթա լեր, ծախ գաթա — ջրա-
ղացի քարի մեծութիւն:

Գաթան հենց վոր մեջտեղ լեկավ, վորտեղից-վորտեղ,
վրա թափվեցին անկոչ մեղուները: Գաթան մեղուներից
մի կերպ ազատելով, հարսնիքավորները կտրտեցին ու
սկսեցին ուտել:

Կերան, կերան, բայց այդքան գաթան կարելի՞ լեր
ուտելով վերջացնել...

Հարսնիքավորները կշտացան, լիացան, սուփրան թո-
ղին ու քաշվեցին այս ու այն կողմ:

Ծերերը չիբուխ ելին ծխում ու ննջում, պառաւմներն
ամաններն ելին լվանում, իսկ ջահելները պար ելին
բռնել լաջն հրապարակում:

Ծոտերը հենց նկատեցին, վոր հյուրերն զբաղված են
խաղ ու պարով, ցած թռան ծառերից ու սկսեցին վա-
լել լիքը սուփրան:

Սա առաջին անգամն եր ծոտերի կյանքում, վոր նը-
րանց վոչ վոք չբռեց, քար կամ փայտ չհետեց, վոր
հեռանան սուփրալից:

Հապա Ծավիկ ծիտն անտեղի՞ լեր ախքան աշխա-
տանք թափել, վոր ծտերին նեղութուն տալին...

Այսպես գլուղ-գլուղովի լիացան Ծավիկի աղջիկների
ու տղաների հարսանիքին, շնորհակալութուն հայտնեցին
ու ցրվեցին, գնացին իրենց տները:


*
* *

Տարիներ են անցել, շատ տարիներ. բազմացել է
Ծավիկ ծտի սերունդը, լցվել աշխարհքը և ապրում է իր
տատի — Ծավիկի սարքած հարսանիքի մնացորդներով:

Յեթե վորևե տեղ հարսանիք են անում մարդիկ,
ուրախութուն, քեֆ, կամ՝ թեկուզ սովորական ճաշ, ծտե-
րը ճտճտալով լերգում են նրանց համար և սպասում, թե
լերբ է վերջանալու ճաշկերուլթը, վոր իրենք հետո
փշրանքները հավաքեն:

Ծտերը համոզված են, վոր աշխարհիս լերեսին տեղի
ունեցող բոլոր հարսանիքները, ուրախության ճաշկե-
րուլթները և առհասարակ նման բաները տեղի լեն
ունենում իրենց նախատատի — Ծավիկ ծտի աշխատան-
քի շնորհիվ, վոր մարդիկ ուտում են Ծավիկ ծտի ցանած
հատիկի արդյունքները, վորը չի հատնում և չի ել հատնի:

Այդ պատճառով ել ծտերը վար ու ցանք չեն անում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0395973

10 АПР 1937

180

8161

ԳԻՆԸ 1 Բ.

գրք 2.

Մ. ԴԱՐԵՆՅԱՆ —
ՇԱՎԻԿԻ ԶԵՐՆԻՇԿՈ
ԳԻՅ. ՍՏՐԱ ԵՐԵՎԱՆ